



Հանտինգտոնի հիվանդություն. Անհրաժեշտ փաստեր հիվանդի համար

ԻՆՉ Է ԱՅՆ

Հանտինգտոնի հիվանդությունը (ՀՀ) գլխուղեղի քրոնիկական, նեյրոդեգեներատիվ հիվանդություն է: Դա նշանակում է, որ Ձեր գլխուղեղի նյարդային բջիջները ժամանակի ընթացքում քայքայվում են: Սովորաբար հիվանդությունը սկսվում է 30-ից 50 տարեկանում, թեև կարող է սկսվել, երբ Դուք ավելի երիտասարդ եք: ՀՀ-ը ազդում է Ձեր.

- շարժումների,
- վարքի,
- մտածողության, ըմբռնման, սովորելու կարողության, հիշողության,
- անձի վրա:

Առավել հաճախ հանդիպող ախտանիշը՝ շարժումներ, որոնք Դուք չեք կարողանում կառավարել, կոչվում է խորեա: Խորեան առաջացնում է պարանման շարժումներ: Այլ շարժողական խնդիրներից են խոսքի և քայլելու հետ կապված դժվարությունները:

Դուք կարող եք ունենալ նաև այս ախտանիշները.

- հիշողության կորուստ, վատ կենտրոնացում, առաջադրանքներ կատարելու դժվարություն, ներքին մղումները վերահսկելու խնդիրներ,
- դեպրեսիա և հետաքրքրության բացակայություն,
- քնի փոփոխություններ,
- սեռական խնդիրներ,
- կլման դժվարություն,
- անկումներ:

Առաջին տարիների ընթացքում՝ մինչև ակնհայտ մարմնական ախտանիշների առաջանալը, կարող են լինել թեթև հոգեկան, հուզական և վարքային շեղումներ:

ԻՆՉ Է ՊԱՏՃԱՌԸ

ՀՀ-ը առաջանում է գենի մի հատվածի էքսպանսիայի (ընդլայնման) հետևանքով: Այս էքսպանսիան բերում է գլխուղեղի նյարդային բջիջների կորստի: Ինչքան շատ է էքսպանսիան կրկնում իրեն, այնքան ավելի վաղ տարիքում է սկսվում ՀՀ-ը: Այս ոչ նորմալ գենի գենետիկ թեստավորումը հաստատում է ախտարոշումը:

ՀՀ-ը ժառանգվում է: Դուք ժառանգում եք գույգ գեներ, մեկը մորից, մյուսը՝ հորից: ՀՀ-ի դեպքում բավական է ժառանգել ոչ նորմալ գենը միայն մեկ ծնողից: Եթե ծնողներից մեկն ունի ոչ նորմալ գեն, ապա ամեն երեխա ունի ՀՀ ժառանգելու 50% հավանականություն: Երբեմն գենի ժառանգումը կարող է ակնհայտ չլինել, օրինակ եթե ծնողները մահանան մինչև իրենց մոտ հիվանդության սկսվելը:

ԿՄ՝ ԱՐԴՅՈՔ ԲՈՒԺՈՒՄ

Ներկայումս չկա որևէ բուժում, որը կարող է դանդաղեցնել կամ հետ դարձնել հիվանդությունը: ՀՀ-ը ներկայումս անբուժելի է, բայց գոյություն ունեն դեղամիջոցներ, որոնք կարող են նվազեցնել որոշ ախտանիշների արտահայտվածությունը: Այս դեղերը օգնում են լավացնել շարժումները, դեպրեսիան և վարքը: Հարցրեք Ձեր նյարդաբանին դեղորայքի տարբերակների մասին:

ԱՐԴՅՈՔ ՀՀ-Ը ԵՐԲԼԷ ՍԽԱԼ Է ԱՆՏՈՐՈՇՎՈՒՄ

Վաղ շրջանում ՀՀ-ը կարող է դժվար լինել ախտարոշել, հատկապես եթե Դուք չգիտեք Ձեր ընտանեկան պատմությունը: Դա պայմանավորված է նրանով, որ ախտանիշները բարդ են և կարող են տարբեր լինել պացիենտների մոտ: Սկզբում այլ ախտանիշները, օրինակ դեպրեսիան, կարող են ավելի ակնհայտ լինել, քան խորեան: Երբ ի հայտ է գալիս խորեան, Դուք կարող եք հետազոտվել, անցնել գենետիկական թեստավորում ախտորոշվելու համար:

ԻՆՉ ԿԱՐՈՂ ԵՄ ԵՍ ԱՎՆԿԱԼԵԼ՝ ԱՊՐԵԼՈՎ ՀՀ-ՈՎ

Հիվանդության զարգացման հետ կարող են խորանալ հետևյալ խնդիրները.

- անկառավարելի շարժումների շատացում,
- մտածողության, ըմբռնման, սովորելու ունակության և հիշողության փոփոխություններ,
- հոգեկան, հուզական և վարքային փոփոխություններ:

Դուք կարող եք ունենալ խոսքի և կլման դժվարություններ: Խեղդվելը կարող է մտահոգիչ խնդիր դառնալ: Ի լրումն այս ամենի, կարող են ավելանալ հուզական խանգարումները, հաճախ է հանդիպում դեպրեսիան: Այլ վարքային խանգարումներն ընդգրկում են.



Հանտինգտոնի հիվանդություն. Անհրաժեշտ փաստեր հիվանդի համար

- հետաքրքրության և հոգատարության բացակայություն,
- հակասոցիալական վարքագիծ,
- կողմնորոշման վատացում,
- կամակորություն:

Հիվանդները հաճախ իրենց հիասթափված են զգում, երբ գիտակցում են, որ աստիճանաբար կորցնում են իրենց ֆիզիկական և մտավոր կարողությունները: Նրանք այլևս չեն կարողանում կատարել այն առաջադրանքները, որոնք կատարում էին նախկինում:

Հիվանդության վերջին շրջանում պացիենտները կարող են դեռ ընկալել առօրյա կյանքը և ճանաչել մարդկանց: Այնուամենայնիվ, նրանք կարող են այլևս ընդունակ չլինել հոգ տանելու իրենց մասին: ՀՀ-մբ պացիենտները կարիք ունեն շուրջօրյա խնամքի, քանի որ կորցնում են ինքնուրույն խոսելու, սնվելու, քայլելու, միզապարկի և աղիների աշխատանքը կառավարելու ունակությունները: Ի վերջո, հիվանդությունը կարող է բերել խեղդման, թոքաբորբի կամ այլ հիվանդության, որոնք էլ բերում են մահվան:

Խորհրդակցեք Ձեր նյարդաբանի հետ բուժման լավագույն տարբերակների վերաբերյալ: